



# EU COVID-19 Solidarity Programme for the Eastern Partnership

Standing Together

## Փակ հաստատություններում COVID-19-ի հետևանքներին հակազդելու նպատակով միջոցների մատակարարման հայտամրցույթ. լուս 2<sup>1</sup>

## Քրեակատարողական հաստատությունները Հայաստանի Հանրապետությունում<sup>2</sup>

### Նախաբան

Նիդերլանդների հելսինկյան կոմիտեն (ՆՀԿ) սկսել է տարածաշրջանային «Covid-19 հետևանքների չեզոքացման աջակցության ծրագիր 2020-2022թթ.»<sup>1</sup> Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության և AFEW International-ի հետ համագործակցությամբ: ՆՀԿ-ն համագործակցում է Human Rights in Mental Health-ի (Մարդու իրավունքները հոգեկան առողջության ոլորտում, Հոգեբուժության գլոբալ նախաձեռնության ֆեդերացիա) հետ՝ ծրագրի գործողություններն իրականացնելու համար: Սույն ծրագիրը աջակցելու է քաղհասարակության կազմակերպություններին (ՔՀԿ)՝ արձագանքելու COVID-19 համավարակի անմիջական և երկարաժամկետ հետևանքներին Արևելյան գործընկերության երկրներում: Ծրագիրը «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության կողմից ղեկավարվող կոնսորցիումի կողմից իրականացվող գործողությունների ավելի մեծ շարքի մի մասն է: Ընդհանուր նպատակն է բարելավել ՔՀԿ-ների՝ Covid-19 համավարակի հետևանքով առաջացած կարճաժամկետ և միջանժամկետ մարտահրավերներին արդյունավետորեն արձագանքելու կարողությունները, ինչպես նաև ազդել խոցելի խմբերին և համավարակից անհամաչափորեն տուժած անձանց աջակցության երկարաժամկետ քաղաքականության բարեփոխումների վրա:

Փակ հաստատություններում (թե քրեակատարողական հաստատություններում և թե քրեական արդարադատության օդակի այլ հաստատություններում, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց ազատազրկման վայրերում) ապրող անձինք ընդգրկված են ծրագրի խոցելի խմբերում: Այս խմբերի համար Covid-19-ի կանխարգելման և բուժման նպատակով տրվել են հատուկ միջազգային ցուցումներ: ՔՀԿ գործունեությունը կարևոր է՝ մշտադիտարկելու և զեկուցելու՝ արդյոք այս ցուցումները մտնում են և ինչպես են մտնում ազգային կարգավորումների

<sup>1</sup>2020թ. սեպտեմբերի 29-ին հրապարակված սույն հայտամրցույթի [առաջին լուսը](#) տարածաշրջանային էր և նպատակ ուներ ներառել թե քրեակատարողական հաստատություններ և թե հոգեբուժական հաստատություններ: Հայտերի ընտրության արդյունքում մշտադիտարկում իրականացվեց Հայաստանի միայն հոգեբուժական հաստատություններում, և հետևաբար առաջացավ երկրորդ լուս հայտարարելու անհրաժեշտություն:

<sup>2</sup>«Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխաստվություն է կրում Նիդերլանդների հելսինկյան կոմիտեն և այն ոչ մի կերպ չի արտահայտում Եվրոպական միության տեսակետը»:



Funded by European Union





# EU COVID-19 Solidarity Programme for the Eastern Partnership

*Standing Together*

մեջ, ինչպես նաև՝ ինչպես են վերջիններս իրականացվում: Բացի դրանից՝ հավանաբար անհրաժեշտ կլինի խորհրդատվություն տրամադրել շահագրգիռ կողմերին և իշխանություններին այն խնդիրների առնչությամբ, որոնց նրանք բախվում են Covid-19-ի կանխարգելման և բուժման ընթացքում:

Սույն հայտամրցույթի շրջանակում ակնկալվում են դրամաշնորհի հայտեր՝ 2020-2021 թ. ժամանակաշրջանում վերոնշյալ խնդիրները լուծելու նպատակով:

## Մրցույթի նպատակները

ՆՀԿ-ն և ՀԳՆՖ-ն ցանկանում են դրամաշնորհներ տրամադրել ՔՀԿ-ներին՝ մշտադիտարկելու Covid-19-ի կանխարգելման և բուժման միջոցառումների ազդեցությունը Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հաստատություններում, կալանավայրերում և/կամ նախնական կալանքի վայրերում պահվող անձանց պայմանների վրա: Մրա մեջ են մտնում բոլոր վերաբերելի հարցերը, այդ թվում՝ առողջապահություն (առողջապահական ծառայությունների դադարեցումը), իրավաբանների, հարազատների կամ մտերիմ անձանց հետ կապ (դրա բացակայություն), երկրում Covid-19-ի դեմ պատվաստման ծրագրում ընդգրկվածություն և համապատասխան այլ հիմնարար իրավունքներ: Մշտադիտարկելուց և զեկուցելուց զատ՝ նպատակ է դրված նաև տրամադրել խորհրդատվություն և աջակցություն շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ ազատազրկված անձանց, աշխատակազմին, հարազատներին, իրավաբաններին՝ այն խնդիրների առնչությամբ, որոնց նրանք բախվում են Covid-19-ի կանխարգելման և բուժման ընթացքում:

Մրցույթին կարող են հայտ ներկայացնել կազմակերպությունները (կամ կոնսորցիումները), որոնք արդեն հասանելիություն ունեն քրեակատարողական հաստատություններին Հայաստանի Հանրապետության Կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակում կամ իշխանությունների հետ որևէ այլ համաձայնագրով: Դիմորդները, որոնք չունեն ֆորմալացված հարաբերություններ այն պետական մարմինների հետ, որոնք հասանելիություն են տալիս քրեակատարողական հաստատություններին, պետք է ապացուցեն, որ ունեն մշտադիտարկման հիման վրա վստահելի տեղեկություն հավաքագրելու փորձ և մանրամասն բացատրեն, թե ինչպես է նման տեղեկություն հավաքագրվելու:

Հայտի նպատակը պետք է լինի փակ հաստատություններում Covid-19-ին առնչվող հարցերին հատուկ ուշադրության դարձնելը՝ ի լրումն քրեակատարողական հաստատությունների պայմաններին առնչվող ընթացիկ աշխատանքներին:

Ընտրված կազմակերպություններին կտրամադրվի փակ հաստատություններում Covid-19-ի վերաբերյալ միջազգային չափանիշների փաստաթղթեր և նրանք հնարավորություն կունենան ՆՀԿ-ի և ՀԳՆՖ-ի փորձագետների խմբից խորհրդատվություն ստանալ փակ հաստատություններում առողջապահության և մշտադիտարկման մեթոդաբանության հարցերի շուրջ:



Funded by European Union





# EU COVID-19 Solidarity Programme for the Eastern Partnership

*Standing Together*

## Ովքեր կարող են դիմել

Սույն հայտամրցույթը բաց է այն քաղաքացիական հասարակության շահույթ չհետապնդող կազմակերպությունների կամ դրանց կոնսորցիումների համար, որոնք հիմնադրված են Հայաստանի Հանրապետությունում և ունեն իրավական անձի կարգավիճակ: Կոնսորցիումի դեպքում հիմնական դիմորդը կլինի ամբողջ գործողության իրականացման պատասխանատուն:

Բոլոր կազմակերպությունները պետք է ունենան ֆորմալացված հարաբերություններ համապատասխան պետական մարմինների հետ, որոնք հասանելիություն են տալիս քրեակատարողական հաստատություններին, և դիմորդը պետք է ապացուցի, որ ունի այս հաստատությունների հետ աշխատելու փորձ:

Դիմումը պետք է ընդգրկի ստորև նշված կետերի վերաբերյալ փաստաթղթեր.

- Ներպետական օրենսդրությամբ գրանցված շահույթ չհետապնդող կազմակերպության գրանցման կարգավիճակ,
- Հայտով ներկայացվող ծրագրին համահունչ գործողությունների կատարման առնվազն չորս տարվա փորձ,
- Նման չափի բյուջեի կառավարման փորձ:

Պետական կառավարման հաստատությունները, պետական գերատեսչությունները, տեղական կամ տարածաշրջանային իշխանությունները, քաղաքական կուսակցությունները կամ քաղաքական կուսակցությունների հետ կապված կազմակերպությունների հայտերը չեն դիտարկվի:

ՔՀԿ-ները, որոնք դիմել և/կամ ստացել են դրամաշնորհ այս ծրագրի շրջանակում հայտարարված առաջին ([լրտ1](#)) հայտամրցույթին (մշտադիտարկելու Covid-19-ի կանխարգելման և բուժման նպատակով ձեռնարկված միջոցառումների հետևանքները քրեակատարողական հաստատություններում ազատազրկված անձանց պայմանների վրա) ևս կարող են դիմել:

## Դրամաշնորհի չափը և տևողությունը

ՆՀԿ-ն և ՀԳՆ-ն կաջակցեն ՔՀԿ-ներին մինչև **6000 եվրոյի չափով**: Դրամաշնորհը կտրվի միայն մեկ դիմորդի՝ կախված դիմումի որակից և երկրում համապատասխան իրավիճակից:

Առաջարկվող ծրագրի տևողությունը պետք է լինի 9-12 ամիս:

ՆՀԿ-ն և ՀԳՆ-ն իրավունք են վերապահում առաջարկել դիմող կազմակերպություններին՝ փոփոխել կամ միացնել հայտերը:

## Անթույլատրելի ծախսեր

Բյուջեն պետք է համապատասխանի դիմումի ձևի մեջ նկարագրված գործողություններին: Սույն հայտամրցույթի շրջանակում թույլատրելի չեն հետևյալ գործողությունները.



Funded by European Union





# EU COVID-19 Solidarity Programme for the Eastern Partnership

*Standing Together*

- Ենթակառուցվածքներին առնչվող ծրագրեր (ճանապարհների, կամուրջների, շինությունների կառուցում և այլն)
- Հողատարածքի կամ սեփականության գնում
- Քաղաքական կամ կրոնական գործողություններ
- Էկոլոգիապես վնասակար ծրագրեր
- Դրամաշնորհի մեկնարկից առաջ իրականացված գործողություններ (ծախսեր, որոնք առնչվում են դրամաշնորհի պայմանագիրը ստորագրելուց առաջ իրականացված գործողություններին)

Թույլատրելի ծախսերը ներառում են բոլոր այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են՝ գնելու անհրաժեշտ իրերը, ինչպիսիք են՝ անհատական պաշտպանության միջոցներ, պատվաստանյութեր և SS/կապի սարքավորումներ:

## Դիմումների ներկայացման ընթացքը

Դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալը.

- Հավելված 1 – Դիմումի ձև
- Հավելված 2 – Բյուջե
- Կազմակերպության գրանցման հավաստագիր (բնօրինակը՝ անգլերեն թարգմանությամբ)
- Կազմակերպության կանոնադրությունը (հնարավորության դեպքում անգլերեն)
- Նմանատիպ ծրագրերի փորձի ապացույց
- Ծրագրի թիմի CV-ներ
- Եթե հայտը ներկայացվում է կոնսորցիումի կողմից, համագործակցության գործընթացի ընդհանուր նկարագիր և առանձին անդամների միջև առաջադրանքների բաշխում դիմումի ձևի մեջ (հավելված 1):

Դիմումները կարող են ներկայացվել անգլերեն կամ ռուսերեն լեզուներով: Ներկայացված բոլոր դիմումները պետք է ստորագրվեն կազմակերպության ղեկավարի կողմից, սկանավորվեն և ուղարկվեն էլեկտրոնային տարբերակով:

Դիմումի փաթեթը պետք է ներկայացվի [Covid19SP@nhc.nl](mailto:Covid19SP@nhc.nl)

Դիմումի ամբողջական փաթեթի ներկայացման վերջնաժամկետն է **դեկտեմբերի 19, 2021թ.:**

## Լրացուցիչ տեղեկատվություն

Կարող եք նաև հայտերի վերաբերյալ ձեր հարցերն ուղղել **դեկտեմբերի 03** էլ. հասցեին մինչև: [Covid19SP@nhc.nl](mailto:Covid19SP@nhc.nl)

Հարցերի պատասխանները կտրվեն 5 աշխատանքային օրվա ընթացքում:





# EU COVID-19 Solidarity Programme for the Eastern Partnership

*Standing Together*

## Հայտերի ընտրության ընթացքը

Ստորև ներկայացված ընտրության չափանիշներով 70 կամ ավել միավոր ստացած հայտերը կգնահատվեն հետևյալ չափանիշներով.

	Հայտերի ընտրության չափանիշներ	Առավելագույն միավոր
1	Ծախսարդյունավետ և իրատեսական բյուջե	15
2	Մշտադիտարկման և զեկուցման ցանց և փորձի ու գիտելիքի առկայություն	30
3	Ռիսկերի վերլուծություն և ռիսկերի մեղմացման միջոցառումներ	10
4	Առանձին դեպքերում հետագա գործունեություն ծավալելու կարողություն	20
5	Տեղական/տարածաշրջանային մշտադիտարկողների հասանելիություն	25
<b>Ընդհանուր՝</b>		<b>100</b>

Ձեր հայտերի վերաբերյալ արձագանք կստանաք էլ. հասցեով՝ 2022թ. **հունվարի 14** ուշ ուշ

Հայտերի ընտրությանն առնչվող մտահոգությունները կամ մեկնաբանությունները կարող եք ներկայացնել ՆՀԿ գրասենյակ՝ Բիֆլյրֆիսմարկտ 5, 2513 AM, Հաագա, Նիդերլանդներ (Riviermarkt 5, 2513 AM, The Hague, the Netherlands) հասցեով կամ ուղարկեք XX էլեկտրոնային հասցեին: [Covid19SP@nhc.nl](mailto:Covid19SP@nhc.nl)



Funded by European Union



NETHERLANDS  
HELSINKI  
COMMITTEE



AFEW  
international enterprise